

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր
հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում»

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Սվետլանա Խոսրովյան

Ուսումնական հաստատություն՝ Սիսիանի հ. 5 հիմն. դպրոց

2023

Բովանդակություն

1. Ներածություն	
1.1. Թեմայի արդիականությունը	3
1.2. Նպատակը և խնդիրները	4
2. Հիմնական մաս	
2.1. Բնապահպանական դաստիարակությունը, որպես մարդու համակողմանի զարգացման բաղադրամաս	5
2.2. Բնապահպանական գիտակցության ձևավորման խնդիրները, մեթոդները և միջոցները	7
2.3. Բնապահպանական վարքագծի դրսևորումներ	8
3. Մեթոդական մաս	11
4. Դասի պլան	16
5. Եզրակացություն	21
6. Գրականության ցանկ	22

Ներածություն

<<Բնությունը կատակներ չի ճանաչում.
Նա միշտ արդարացի է, միշտ լուրջ է,
Միշտ խիստ է, նա միշտ ճշմարտացի է.
Մխալներն ու մոլորությունները
Մարդկանցից են բխում>>
ԳՅՈԹԵ

1.1. Թեմայի արդիականությունը

Հազարամյակներ շարունակ մենք պայքարել ենք բնության դեմ, իշխել նրան, վերափոխել և անխնա ոչնչացրել: Ինքը՝ բնությունը, եղել և միշտ կլինի մարդուց ուժեղ, քանի որ նա է ծնել մարդուն: Մարդը միայն մի ակնթարթ է բնության կյանքի մեջ, իսկ բնությունն ընդմիշտ է և անվերջ: Բնությունը վերարտադրություն է պահանջում: Մոլորակի հետ փոխհարաբերություն հաստատելու համար անհրաժեշտ են խորը գիտելիքներ և ինելամիտ զգուշություն: Դրանք են մարդկության փրկության միակ հույսի կանթեղները: Պահպանել ներդաշնակություն մարդու և բնության միջև. սա է հիմնական խնդիրը, որը ծառայել է ներկա սերնդի առջև: Անհրաժեշտ է զարգացնել յուրաքանչյուր մարդու մոտ էկոլոգիական գիտակցություն, որն էլ կորոշի տեխնոլոգիաների, ձեռնարկությունների կառուցման և բնական ռեսուրսների օգտագործման տարբերակների ընտրությունը:

Աշխարհը դարձել է մարդածին: Այսօր մենք ապրում ենք «փոքր տիեզերքի մեծ մոլորակում», որտեղ տնտեսությունը բացառիկ ճնշում է գործադրում Երկիր մոլորակի վրա. չկա ազատ ոչ մի բնական ռեսուրս: Ամենը՝ ներառյալ կենսաբազմազանությունը, քաղցրահամ ջրերը, մթնոլորտը, օվկիանոսները, անտառները, սառցե ժայռերը և այլն, անմիջական դեր ունեն Երկիր մոլորակի և, հետևաբար, համաշխարհային տնտեսության կայուն զարգացման գործում: Մտահոգությունն այն է, որ ներկայիս տնտեսական համակարգը մշակվել է Ա. Սմիթից մինչև Ջ. Քեյնսի ժամանակաշրջանում, երբ մենք «փոքր մոլորակ էինք, մեծ տիեզերքի մեջ», երբ համաշխարհային տնտեսության՝ մոլորակի վրա ազդելու գաղափարը ծիծաղելի էր: Այն ժամանակ կարող էինք աղտոտել մթնոլորտը, դատարկել օվկիանոսները և այլն, պատկերացում չունենալով, որ Երկիր մոլորակը դրան ի պատասխան կարող է չափազանց դաժան գտնվել:

<<Եթե ուզում եք, որ մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն, ապա յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր դեռահաս, պատանի, երիտասարդ շրջակա միջավայրի պահպանությունը պիտի դարձնի իր սուրբ պարտականությունը>>:

Աշխարհի նկատմամբ բնապահպանական վերաբերմունքը ձևավորվում ու զարգանում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում: Բնության և առհասարակ շրջակա միջավայրի հետ համերաշխության ու ներդաշնակության մեջ ապրելու կարողության մշակումը հարկավոր է սկսել հնարավորինս վաղ մանկությունից:

Հայտնի է նաև, որ իսկական գեղեցկությունը թաքնված է բնության մեջ: Խնդիրն այն է, որ անհրաժեշտ է օգնել երեխաներին տեսնելու և գնահատելու այն:

Բնությունը մարդուն հարստացնում է հոգեպես: Նրա հետ շփումը նպաստում է բարոյական դրական որակների ձևավորմանը:

Երեխաներին գեղեցիկը տեսնել սովորեցնելը ինքնին բարդ գործընթաց է: Նրանք մեծահասակների բառերի, տրամադրության և գործերի հանդեպ չափազանց ուշադիր և զգայուն են այդ պատճառով նրանց պետք է հանգեցնել աշխարհայացքային հետևությունների. Բնության բազմազանության և միասնության, ամենատարբեր առարկաների միջև կապերի ու փոխհարաբերությունների, բնության և նրա զարգացման մեջ մշտական փոփոխությունների, կենդանի էակների միջև նպատակահարմար փոխհարաբերությունների, բնության խելամիտ օգտագործման և պահպանման դրույթներին:

Միջին և ավագ դպրոցում ներդրվել է «Աշխարհագրություն» առարկան, որտեղ բացի բնությունից ներառված են աշխարհաճանաչողության տարբեր բնագավառի գիտելիքներ: Աշխարհագրությունը պատկանում է հիմնարար բնական գիտություններին և աշխարհագրական գիտությունների համակարգում այն հատուկ դեր է խաղում: Այն հայտնվում է որպես մի տեսակ <<գեր-գիտություն>>, որը միավորում է տեղեկատվությունը բոլոր գործընթացների և երևույթների մասին, որոնք տեղի են ունենում միջաստղային միգամածությունից մոլորակի ձևավորումից հետո:

<<Աշխարհագրություն>> առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունը, նպաստել հաղորդակցվելու, համագործակցելու, շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից լինելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, որը կոչված է ապահովելու հանրակրթական դպրոցի հետագա աստիճաններում սովորողների առավել հիմնարար գիտելիքները հումանիտար, բնագիտական առարկաներից: Այդ տեսանկյունից տարրական դպրոցում հարկավոր է ստեղծել այն հիմքերը, որոնք հետագայում արդյունավետ կդարձնեն ուսուցումը:

Բնապահպանական կրթությունը նպաստում է երեխայի բնապահպանական գիտակցության և մտածելակերպի ձևավորմանը: Աշակերտի մեջ ձևավորվում է բնության հետ ներդաշնակ կենսահաստատում և պատասխանատվություն բնության հանդեպ: Մարդը ինչպես բնության օգտագործողն է, այնպես էլ դրա պահպանողը: Հարկավոր է հնարավորինս խնայողաբար օգտագործել բնությունը՝ մտածելով ապագայի մասին: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել գնահատել բնության գեղեցկությունը:

Առողջ և մաքուր շրջակա միջավայր ունենալու խնդրով շահագրգռված են բոլորը: Ուստի բնապահպանական խնդիրները վերաբերում են բոլորին:

<<Աշխարհագրություն>> առարկայի միջոցով միջին և ավագ դպրոցականների մոտ ձևավորվում և ամրակայվում են մարդու հիմնարար արժեքներն ու նորմերը, որոնք էլ հետագայում բնության և շրջապատի նկատմամբ ճիշտ վարքագծի հիմք են դառնալու:

1.2. Թեմայի նպատակը և խնդիրները

Թեմայի նպատակն է ուսումնասիրել առկա բնապահպանական հիմնախնդիրները, վերհանել դրանց լուծմանը տանող ուղիները՝ բնապահպանական կրթությունը

դարձնելով նախապայման: Հետագոտության նպատակին հասնելու համար, առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Պարզել սովորողների, իրենց ծնողների և միջավայրի միմյանց նկատմամբ փոխազդեցությունը բնապահպանական կրթության գործընթացում :
- Բացահայտել բնապահպանական ուսուցման և բնապահպանական տեղեկատվության հիմնական տարբերությունները :
- Ուսումնասիրել բնապահպանական կրթության մեթոդները :
- Ուսումնասիրել բնապահպանական հիմնախնդիրները և լուծման հնարավոր ուղիները:

Երեխան՝ ինքն էլ լինելով բնության մի մասնիկը, պետք է կարողանա իրականացնել բնապահպանական առանձին խնդիրներ: Կարևորվում է երեխաների շփումները բնության հետ, շրջակա միջավայրի նկատմամբ ճիշտ մոտեցման և բնության հանդեպ դրական վարքագծի ձևավորումը: Միջին և ավագ դպրոցում պետք է ուշադրություն դարձնել անձի ընդհանուր կարողությունների, անհատական որակների զարգացմանը, որի շնորհիվ մենք կունենանք ապագա գիտակից քաղաքացի, ում համար կյանքի առաջնային խնդիրներից մեկը կլինի բնապահպանությունը:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

2.1. Բնապահպանական դաստիարակությունը, որպես մարդու համակողմանի զարգացման բաղադրամաս

Մշտապես պետք է իմանալ, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը ենթադրում է աճող սերնդի դաստիարակության բոլոր ձևերի հետ միասին նաև բնապահպանական դաստիարակություն: Որպեսզի անձը նշված ուղղություններով ունենա և՛ զարգացվածություն, և դաստիարակվածություն, կարևոր է, որ այդ երկուսը ներդաշնակված լինեն մարդու անձի մեջ: Ահա սա է առաջատար նպատակը: Գիտատեխնիկական առաջընթացի ներկա ժամանակաշրջանը, որը առաջ է բերել բնության հավասարակշռության աննախադեպ խախտումներ, կենսոլորտի հետագա զարգացումը կախման մեջ է դնում մարդուց:

Գիտնականների կարծիքով, բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը այն հիմնական ոլորտներն են, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ անխնա, սպառողական վերաբերմունքը, և որի շնորհիվ մարդը կարող է հասնել աշխարհի կայուն զարգացման: Ժամանակակից աշխարհը ապրում է իր զարգացման ծանր շրջանը:

Շրջակա միջավայրի վիճակի այդպիսի գիտակցումը գիտելիքների տարբեր բնագավառների մասնագետներին բերեց այն եզրակացության, որ էկոլոգիական ճգնաժամը ըստ էության, կրում է աշխարհայացքային, հոգևոր-բարոյական բնույթ: Իսկ դա նշանակում է, որ էկոլոգիական աղետի վիճակից դուրս գալու առաջին պայմանը սովորողների մոտ բնության անաչառության վերաբերյալ ունեցած պատկերացման և բնությունը, որպես զուտ կենսապահովման միջոց դիտարկելու արժեքային կողմնորոշման վերափոխումն է:

Այսօր ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախված է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը, նպատակահարմարությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկ է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ: Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի, և նրա բարեհաջող վերականգնման համար բոլորը անձնական պատասխանատվություն են կրում:

Սովորողների մեջ շրջակա աշխարհի հետ փոխհարաբերության մշակույթի ներարկման գործում գլխավոր դերը պատկանում է դաստիարակությանը, որն ապահովում է անձի հոգևոր-բարոյական հասունացումը՝ նպաստելով նրա՝ բնության հետ ունեցած հարաբերությունների ներդաշնակությունը և որոշում հասարակության սոցիալ-մշակութային զարգացման հեռանկարները:

Դաստիարակության հիմնական գործառույթը կայանում է նրանում, որ աճող սերնդին փոխանցի մշակութային այն արժեքները, որոնք կուտակվել են նախորդ սերունդների կողմից և մասնակցությունը յուրաքանչյուրի մշակութային փորձի ձևավորմանը, որը բնապահպանական իմաստով հասունացնում է անձի շրջակա բնական և սոցիալական միջավայրի հետ ունեցած փոխհարաբերություններում՝ իմացական հուզագագացմունքային և նորմատիպային մակարդակներում: Արդյունքում՝ դաստիարակության օբյեկտը՝ անձը, սովորողը բնօգտագործողի իր դիրքորոշումը փոխում է բնապահպանական դիրքորոշման՝ հաղթահարելով այն բարդույթը, որ կողմնորոշված է մարդու՝ բնության վրա ունեցած մեծ ազդեցությամբ:

Գիտականների մեկ ուրիշ խումբ բնապահպանական դաստիարակության հիմնական նպատակը դիտում է որպես անձի բնապահպանական գիտակցության և մտածողության, բնապահպանական մշակույթի, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի զարգացում, ինչպես նաև բնօգտագործման գործնական փորձի ձևավորում և իրազեկություն, ճիշտ որոշումների ընդունում, որը և կնպաստի մարդկանց առողջ կենցաղի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկրի բնապահպանական անվտանգությանը:

Ա.Ա. Վերբիցկին էկոլոգիական կրթություն ասելով հասկանում է մարդու կողմից բնապահպանական մշակույթի յուրացում դաստիարակության և ինքնակրթության միջոցով, ինչպես նաև կենցաղային և աշխատանքային գործունեության շրջանակներում: Իսկ անընդմեջ բնապահպանական կրթության նպատակը նա համարում է բնապահպանական մշակույթի հարստացումը ամբողջ կյանքի ընթացքում:

Բնապահպանական դաստիարակությունը ավագ սերնդի կողմից դաստիարակության, կրթության, բարոյական որակների ու հոգևոր այլ արժեքների փոխանցում է սովորողներին, նրանց մեջ ձևավորելու բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, բնօգտագործման կարողությունների ու հմտությունների ձևավորման առողջ կենսակերպի մշակման նպատակով: Բնապահպանական

դաստիարակության հիմնական նպատակը դառնում է բնության նկատմամբ

արժեքային ճիշտ կողմնորոշումների, բնապահպանական ընդունակությունների, պատասխանատու վերաբերմունքի, բնության մեջ ճիշտ վարքագծի ունակությունների դրսևորումը և բնապահպանական մշակույթի ձևավորումը: Այսինքն՝ բնապահպանական դաստիարակություն ասելով հասկանում են անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների ամբողջական միասնությունը, որը նպատակաուղղված է աճող սերնդի բնապահպանական մշակույթի և աշխարհայացքի ձևավորմանը:

Միայն դաստիարակության միջոցով է հնարավոր մարդկանց գործունեության համապատասխանեցումը կենսոլորտի և կյանքի սոցիալական օրենքներին: Բնապահպանական դաստիարակություն ունեցող մարդը առաջին հերթին հասնում է ներդաշնակության ինչպես իր ներաշխարհի, այնպես էլ արտաքին աշխարհի հետ:

Ավագ դպրոցական տարիքում այդ ունակությունը ձևավորվում է հիմնական հատուկ գիտելիքների, հուզական ոլորտի և էկոլոգիական գործունեության կարողությունների զարգացման հաշվին:

Մարդու ներթափանցումն ինքնակարգավորվող կենսոլորտի համակարգի մեջ, որը ձևավորվել է միլիոնավոր տարիների ընթացքում, նրանից առանձնահատուկ գիտելիքներ, զգուշություն, շրջակա միջավայրի անվտանգությունը երաշխավորող կանխատեսման բարձր հնարավորություններ է պահանջում: Ահա՛ թե ինչու բնապահպանական կրթության և դաստիարակության հետագա խթանումը, վերջինիս տեսական նոր մակարդակի բարձրացումն օրվա հրամայական է դառնում: Բնապահպանական դաստիարակությունը, որպես պարտադիր պայման, ելնում է սովյալ ազգային հանրության, կոնկրետ դեպքում՝ հայ ժողովրդի տարածաշրջանային էկոլոգիական, ազգային-էթնիկական, մշակութային առանձնահատկություններից ու հոգեկերտվածքից:

2.2. Բնապահպանական գիտակցության ձևավորման խնդիրները, մեթոդները և միջոցները

«Բնապահպանական գիտակցություն» հասկացության ներբովանդակային բնութագիրը փորձել են տալ ռուս գիտնականներ Ս.Դ. Դերյաբոն, Ե.Խ. Եվտուշենկոն, Ի.Դ. Զվերևը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը տվել է «բնապահպանական գիտակցություն» հասկացության առանձին բաղադրիչների գիտական բնութագրումը, սակայն մինչ այսօր, դեռևս այդ հասկացությանը լիարժեք սահմանում չի տրված, և հիմնահարցը կարիք է զգում խոր գիտական բացահայտման: «Բնապահպանական գիտակցություն» հասկացությունը կարևոր աշխարհայացքային դեր է կատարում: Երկար տարիների մանկավարժական փորձից և գիտական հետազոտությունների արդյունքներից՝ փորձենք տալ «բնապահպանական գիտակցության» հասկացության սահմանումը: Բնապահպանական գիտակցությունը հոգեկան երևույթ է, որը իրենից ներկայացնում է անձի՝ «մարդ-բնություն-հասարակություն» հարաբերակցության, նրանց բազմաբնույթ կապերի, օրինաչափությունների մասին: Բնապահպանական բնույթի գործողություններում մարդու մոտ ձևավորվում են աշխարհի մասին ընդհանուր պատկերացումներ, որոնց շնորհիվ նա ճշգրտում է իր տեղը բնության

մեջ: Այս գործընթացում կարևոր դեր է խաղում անձի «մարդ-բնություն-հասարակություն» համակարգի մասին եղած հայացքների համակարգը, որտեղ վճռական և կարգավորող գործոնը անհատի արժեքային վերաբերմունքն է:

Բնության և հասարակության միջև եղած ներդաշնակ հարաբերությունների ձևավորումը պահանջում է ներդաշնակ զարգացած անհատի դաստիարակությունը, որը իր հերթին պահանջում է աշխարհայացքի և մտածողության էկոլոգիականացում: Բնության պահպանության կարողությունների և հմտությունների ձևավորումը իր մեջ դաստիարակչական մեծ ներգործություն է պարունակում: Բնապահպանական դաստիարակության կարևոր գործոն է համարվում նաև անձի կողմից բնության և հասարակության փոխհարաբերության՝ սոցիալ-էկոլոգիական իդեալի ըմբռնումը, որն իր հերթին ենթադրում է բնության նկատմամբ բարոյակամային որակների, պատասխանատվության ձևավորում:

Բնապահպանական դաստիարակության խնդիրը բազմասպեկտ է, և նրա բացահայտման մեթոդաբանական հիմքը համարվում է աշխարհայացքը: Հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, տեղային ավանդույթներն ու սովորույթները՝ բնապահպանական գիտակցության ամբողջական ուսումնասիրումը և բնութագրումը հնարավորություն կտան բնապահպանական կրթությունը ավելի նպատակային կազմակերպել: Բնապահպանական դաստիարակության որպես կրթական դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը:

2.3. Բնապահպանական վարքագծի դրսևորումները

Սովորողների, ընդհանրապես մարդու բնապահպանական մշակույթը նրա՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանատվությունն է: Այն իրականություն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից, ողջ հասարակությունից պահանջվում է սովորողների հետ տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք: Առաջին հերթին նրանց զինել համապատասխան գիտելիքներով: Օրինակ՝ գիտելիքներ՝ բնության և հասարակության կապի, գիտելիքներ՝ բնության գոյության անհրաժեշտության, բնության հավասարակշռության պահպանության, բնապահպանական արժեքների, բնությունից օգտվելու և բնությունը պահպանելու, բնական ռեսուրսների օգտագործման, բնական աղետների, բնապահպանական գիտելիքների և այլնի մասին: Այդ աշխատանքը կարող են կատարել կենսաբանության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցիչները, ընդհանրապես ողջ մանկավարժական կոլեկտիվը: Բնության հավասարակշռության պահպանության համար դպրոցականներն ամենուրեք պետք է պահպանեն շրջակա միջավայրի մաքրություն. չաղտոտեն գետերը, լճերը, աղբյուրները, հողերը, մթնոլորտը, շրջակա միջավայրը, չկտրեն մատղաշ ծառերը, այգիները, անտառներում կրակ չվառեն և այլն: Ներկայումս խիստ անհրաժեշտ է դպրոցներում ունենալ հողերի, գետերի, լճերի մաքրությունը, բուսական, կենդանական աշխարհը պահպանող ջոկատները...Եվ յուրաքանչյուր ուստարի դպրոցների ղեկավարությանը ներկայացնել գրավոր հաշվետվություն՝ այդ ուղղությամբ իրենց կատարած աշխատանքների մասին: Հասարակության զարգացման առաջընթացը ավելի ու ավելի մեծ մասշտաբով է վերափոխում

բնությունը, մեծացնում մարդու իշխանությունը վերջինիս նկատմամբ: Սակայն միշտ չէ, որ նվաճելով բնությունը՝ մարդը մտահոգվում է դրա բացասական հետևանքներով, որոնք առայժմ մեծ չափերի են հասել: Դեռևս 70-ական թվականներին Էնգելսը կանխագուշակում էր. «Շատ էլ չհրապուրվենք բնության նկատմամբ մեր տարած հաղթանակներով: Յուրաքանչյուր այդպիսի տարած հաղթանակի համար նա մեզնից վրեժխնդիր է լինում: Այդ հաղթանակից յուրաքանչյուրը, առաջին հերթին, ունենում է այն հետևանքները, որ մենք նկատի ենք առել, բայց երկրորդ ու երրորդ հերթին ունենում է միանգամայն այլ, չնախատեսված հետևանքներ, որոնք շատ հաճախ ոչնչացնում են առաջինների նշանակությունը... Եվ այսպես՝ յուրաքանչյուր քայլափոխում փաստերը մեզ հիշեցնում են, որ մենք ամենևին էլ բնության վրա չենք իշխում այնպես, ինչպես նվաճողն է իշխում օտար ժողովրդի վրա...»: Ոռոգելով անապատները, չորացնելով ճահիճները, փոխելով գետերի հոսանքը, մարդը փոխում է նաև կյանքի կլիմայական պայմանները: Կլիմայի վրա անուղղակի ազդեցություն է թողնում նաև արտադրությունը, քանի որ նավթի, ածխի ու տորֆի այրման ժամանակ տարեկան մթնոլորտ է բարձրանում մոտ 1.5 միլիարդ տոննա ածխածին, իսկ օդում ածխածնի պարունակությունից է կախված երկրի մակերեսի ջերմությունը: Օդը, գետերը, ծովերը գնալով ավելի մեծ չափերով են աղտոտվում, հողը աղտոտվում է պեստիցիտներով, անտառներն ու կենդանական աշխարհը կործանվում են, կրճատվում է կենսաբազմազանությունը: Արդյունաբերական ձեռնարկությունները գետերը, լճերն ու ծովերն են թափում հարյուրհազարավոր տոննա քիմիական զանազան նյութեր ու նավթամթերքներ: Դրա հետևանքով ջրերը աստիճանաբար կորցնում են թթվածինը, որը հանգեցնում է կենդանական աշխարհի ոչնչացմանը: Օդի, ջրի աղտոտվելը, արդյունաբերական մնացուկները, ռադիոակտիվ նյութերն ու այլ նյութեր սպառնալիք են ստեղծում մարդու գոյության համար: Մարդը պետք է զգուշանա բնության մեծածավալ վերափոխումից և օգտագործումից, քանի որ դա կարող է հետագայում բացասաբար անդրադառնալ նրա էկոլոգիայի վրա: Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում բնության պահպանման համար, քանի որ ամեն մեկը իր հնարավորությունների և ուժերի սահմաններում կարող է աջակցել բնության թեկուզ շատ աննշան մի անկյան պահպանմանը և բարելավմանը: Վերջին հաշվով հասարակությունից է կախված բնության պահպանումը և մարդու գոյության համար բնական միջավայրի ապահովումը: Իրավացի է ասված, որ մարդու համար բնությունը և արհեստանոց է, և տաճար, իսկ մարդը նրանում և ակտիվ աշխատավոր է, և հրապուրված պաշտող:

Քննարկելով բնապահպանական հիմնահարցերը՝ հնարավոր է ապահովել բույսերի, կենդանիների, մարդու և բնության կենսագործունեության ներդաշնակությունը, գենոֆոնդի և տարբեր բնատարածքային համալիրների ընդհանուր էկոլոգիական հավասարակշռությունը: Ուսուցման գործընթացում կարևորվում են ակադեմիական գիտելիքների պաշարը, ներառարկայական և միջառարկայական կապերի ստեղծումը, ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելու հմտությունների և կարողությունների դրսևորումը, մասնագիտական տեսական գիտելիքների օգտագործումը գործնականում: Դասավանդման ժամանակակից մեթոդները հնարավորություն են ընձեռում զարգացնելու սովորողի ստեղծագործական, տրամաբանական մտածողությունը, ինքնուրույն արտահայտվելու և տարբերելու առաջնային նպատակն ու խնդիրները

երկրորդայիններից, ձևավորելու համապատասխան որոշումներ կայացնելու հմտություններ, ինչպես նաև խնդրին ստեղծագործ և քննադատաբար մոտենալու վերաբերմունք:

2.3. Բնապահպանական վարքագծի դրսևորումները

Սովորողների, ընդհանրապես մարդու բնապահպանական մշակույթը նրա՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանատվությունն է: Այն իրականություն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից, ողջ հասարակությունից պահանջվում է սովորողների հետ տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք: Առաջին հերթին նրանց զինել համապատասխան գիտելիքներով: Օրինակ՝ գիտելիքներ՝ բնության և հասարակության կապի, գիտելիքներ՝ բնության գոյության անհրաժեշտության, բնության հավասարակշռության պահպանության, բնապահպանական արժեքների, բնությունից օգտվելու և բնությունը պահպանելու, բնական ռեսուրսների օգտագործման, բնական աղետների, բնապահպանական գիտելիքների և այլնի մասին: Այդ աշխատանքը կարող են կատարել կենսաբանության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցիչները, ընդհանրապես ողջ մանկավարժական կոլեկտիվը: Բնության հավասարակշռության պահպանության համար դպրոցականներն ամենուրեք պետք է պահպանեն շրջակա միջավայրի մաքրություն. չաղտոտեն գետերը, լճերը, աղբյուրները, հողերը, մթնոլորտը, շրջակա միջավայրը, չկտրեն մատղաշ ծառերը, այգիները, անտառներում կրակ չվառեն և այլն: Ներկայումս խիստ անհրաժեշտ է դպրոցներում ունենալ հողերի, գետերի, լճերի մաքրությունը, բուսական, կենդանական աշխարհը պահպանող ջոկատները...Եվ յուրաքանչյուր ուսուարի դպրոցների ղեկավարությանը ներկայացնել գրավոր հաշվետվություն՝ այդ ուղղությամբ իրենց կատարած աշխատանքների մասին: Հասարակության զարգացման առաջընթացը ավելի ու ավելի մեծ մասշտաբով է վերափոխում բնությունը, մեծացնում մարդու իշխանությունը վերջինիս նկատմամբ: Սակայն միշտ չէ, որ նվաճելով բնությունը՝ մարդը մտահոգվում է դրա բացասական հետևանքներով, որոնք առայժմ մեծ չափերի են հասել: Դեռևս 70-ական թվականներին էնգելսը կանխագուշակում էր. «Շատ էլ չհրապուրվենք բնության նկատմամբ մեր տարած հաղթանակներով: Յուրաքանչյուր այդպիսի տարած հաղթանակի համար նա մեզնից վրեժխնդիր է լինում: Այդ հաղթանակից յուրաքանչյուրը, առաջին հերթին, ունենում է այն հետևանքները, որ մենք նկատի ենք առել, բայց երկրորդ ու երրորդ հերթին ունենում է միանգամայն այլ, չնախատեսված հետևանքներ, որոնք շատ հաճախ ոչնչացնում են առաջինների նշանակությունը... Եվ այսպես՝ յուրաքանչյուր քայլափոխում փաստերը մեզ հիշեցնում են, որ մենք ամենևին էլ բնության վրա չենք իշխում այնպես, ինչպես նվաճողն է իշխում օտար ժողովրդի վրա...»: Ոռոգելով անապատները, չորացնելով ճահիճները, փոխելով գետերի հոսանքը, մարդը փոխում է նաև կյանքի կլիմայական պայմանները: Կլիմայի վրա անուղղակի ազդեցություն է թողնում նաև արտադրությունը, քանի որ նավթի, ածխի ու տորֆի այրման ժամանակ տարեկան մթնոլորտ է բարձրանում մոտ 1.5 միլիարդ տոննա ածխածին, իսկ օդում ածխածնի պարունակությունից է կախված երկրի մակերեսի ջերմությունը: Օդը, գետերը, ծովերը գնալով ավելի մեծ չափերով են աղտոտվում, հողը աղտոտվում է պեստիցիտներով, անտառներն ու կենդանական աշխարհը կործանվում են, կրճատվում է կենսաբազմազանությունը: Արդյունաբերական ձեռնարկությունները

զետերը, լճերն ու ծովերն են թափում հարյուրհազարավոր տոննա քիմիական զանազան նյութեր ու նավթամթերքներ: Դրա հետևանքով ջրերը աստիճանաբար կորցնում են թթվածինը, որը հանգեցնում է կենդանական աշխարհի ոչնչացմանը: Օդի, ջրի աղտոտվելը, արդյունաբերական մնացուկները, ռադիոակտիվ նյութերն ու այլ նյութեր սպառնալիք են ստեղծում մարդու գոյության համար: Մարդը պետք է զգուշանա բնության մեծածավալ վերափոխումից և օգտագործումից, քանի որ դա կարող է հետագայում բացասաբար անդրադառնալ նրա էկոլոգիայի վրա: Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում բնության պահպանման համար, քանի որ ամեն մեկը իր հնարավորությունների և ուժերի սահմաններում կարող է աջակցել բնության թեկուզ շատ աննշան մի անկյան պահպանմանը և բարելավմանը: Վերջին հաշվով հասարակությունից է կախված բնության պահպանումը և մարդու գոյության համար բնական միջավայրի ապահովումը: Իրավացի է ասված, որ մարդու համար բնությունը և արհեստանոց է, և տաճար, իսկ մարդը նրանում և ակտիվ աշխատավոր է, և հրապուրված պաշտող:

Քննարկելով բնապահպանական հիմնահարցերը՝ հնարավոր է ապահովել բույսերի, կենդանիների, մարդու և բնության կենսագործունեության ներդաշնակությունը, գենոֆոնդի և տարբեր բնատարածքային համալիրների ընդհանուր էկոլոգիական հավասարակշռությունը: Ուսուցման գործընթացում կարևորվում են ակադեմիական գիտելիքների պաշարը, ներառարկայական և միջառարկայական կապերի ստեղծումը, ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելու հմտությունների և կարողությունների դրսևորումը, մասնագիտական տեսական գիտելիքների օգտագործումը գործնականում: Դասավանդման ժամանակակից մեթոդները հնարավորություն են ընձեռում զարգացնելու սովորողի ստեղծագործական, տրամաբանական մտածողությունը, ինքնուրույն արտահայտվելու և տարբերելու առաջնային նպատակն ու խնդիրները երկրորդայիններից, ձևավորելու համապատասխան որոշումներ կայացնելու հմտություններ, ինչպես նաև խնդրին ստեղծագործ և քննադատաբար մոտենալու վերաբերմունք:

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Աշխարհագրություն ուսուցման գործընթացում սովորողների տրամաբանական և բնագիտական մտածողության զարգացմանն ուղղված ձևակերպումներն անընդհատ փոփոխվում են: Դրանք փոխկապակցված են, որոնցից ամենատարածվածներն են գիտականությունը, մատչելիությունը, համակարգվածությունը, հաջորդականությունը, զննականությունը և այլն: Այս գործընթացում կարևորվում է ուսուցման մեթոդը, որը դասավանդողի և սովորողների միջև փոխազդեցությունն արտացոլող մոտեցումների ու հնարների համախումբ է: Ուսուցման մեթոդն ընտրվում է դասն ավելի ակտիվ և հետաքրքիր դարձնելու նպատակով, որի շնորհիվ էլ հնարավոր է դառնում զարգացնել անհատական, խմբային և համագործակցային աշխատանքային հմտություններ:

Ուսուցման փոխներգործուն մեթոդները (ինտերակտիվ) սկսել են կիրառել վերջին մի քանի տարում: Այս մեթոդները ենթադրում են սովորողների ավելի ընդգրկուն փոխազդեցություն ոչ միայն սովորեցնողի, այլ նաև միմյանց հետ, որի ընթացքում գերակայում է սովորողների ակտիվությունը: Փոխներգործուն մեթոդների միաժամանակ ապահովում են գրեթե բոլոր սովորողների ներգրավվածությունը, որն էլ տանում է անհատական և համագործակցային հմտությունների զարգացմանը՝ դասը դարձնելով ավելի հետաքրքիր, գրավիչ և մատչելի: Ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ ինքնագնահատականի և ինքնավստահության բարձրացման հնարավորություն է ընձեռվում:

Դասավանդման նորագույն մեթոդներով և ԽԻԿ համակարգով փորձել ենք ուսումնասիրել թեման, այն դարձնել ավելի հետաքրքիր, զարգացնել սովորողների անհատական, խմբային և համագործակցային աշխատանքային հմտությունները՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը էկոլոգիական հիմնահարցի լուսաբանման խնդրում: Հայտնի է, որ աշակերտակենտրոն ուսուցումը, բոլոր մասնակիցների ներգրավվածությունը այդ գործընթացում զարգացնում է այնպիսի բարոյական արժեքներ, ինչպիսիք են՝ սեփական դիրքորոշում ունենալը, սրտացավությունը, կամքը, փոխօգնությունը, վերլուծելու ունակությունը, համարձակությունը և այլն:

«Ջերմոցային էֆեկտի» ուսումնասիրման նպատակով կիրառել ենք «Ապագայի անիվ» մեթոդը և վերլուծել պրոբլեմի պատճառահետևանքային կապերը: Կառուցելով պատճառների և հետևանքների մանրամասն պատկերը՝ սովորողները կարողանում են կայացնել ճիշտ որոշումներ՝ տվյալ հիմնախնդրի հետևանքները վերացնելու համար: Երևոյթի պատճառահետևանքային կապի ուսումնասիրման նպատակով աշակերտները կիրառել են տարբեր գծապատկերներ, ցուցադրել խնդրի պատճառները, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են մի շարք հետևանքների: Նշելով բոլոր պատճառներն ու հետևանքները՝ աշակերտներն ինտերակտիվ մեթոդների կիրառումով հանգել են մի շարք եզրակացությունների՝ պատասխանատվություն կրելով մեկը մյուսի ուսումնառության համար: Մարդու լայնածավալ գործունեության հետևանքով շրջակա միջավայրում տեղի են ունեցել անդառնալի փոփոխություններ: Երկիր մոլորակի զանազան ռեսուրսների

չգիտակցված օգտագործման հետևանքով մարդը սպառել է բուսական ու կենդանական աշխարհն այն աստիճան, որ ֆլորայի և ֆաունայի շատ տեսակներ պարզապես անհետացել են, իսկ մյուսները գտնվում են անհետացման եզրին: Հասարակությունը, գիտակցելով կորցրած ռեսուրսների աղետալի չափերը, մշակել է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանն ու պահպանմանն ուղղված միջոցառումների հատուկ համակարգ: Խնդրի վերլուծման ժամանակ սովորողների կողմից առաջարկվել է T-աձև աղյուսակը, որտեղ առանձին-առանձին բացահայտվել են վերականգնվող և չվերականգնվող կենսաբանական ռեսուրսների առանձնահատկությունները և առաջարկվել են ուղիներ վերոհիշյալ խնդիրների լուծման ուղղությամբ: T-աձև աղյուսակի միջոցով աշակերտները հանգել են այն եզրակացության, որ կենսաբանական ռեսուրսները՝ բույսերը և կենդանիները, ոչ միայն ունեն եկոլոգիական կարևոր նշանակություն, այլև կազմում են կենսերկրացենոզի կենսաբազմազանության պահպանման միջոց: Նրանք կարևորել են որոշ միջատների բազմազանության պահպանումը՝ որպես բնության մեջ փոշոտում իրականացնողների՝ ընդգծելով, որ սանիտար միջատները մաքրում են բնությունը լեշերից, կրծողներից, իսկ հողում բնակվող որոշ կենդանատեսակներ փխրեցնում են հողը՝ բարելավելով դրա որակն ու կառուցվածքը: Կենդանիները՝ որպես կենսաերկրացենոզի կարևորագույն հետերոտրոֆ բաղադրիչներ սերտ համագործակցություն ունեն բուսական աշխարհի, ինչպես նաև միկրոօրգանիզմների հետ, որոնք ապահովում են բնության դինամիկ հավասարակշռությունը: Կենսաբազմազանության պահպանման և արդյունավետ օգտագործման միջոցառումներից սովորողների կողմից հատկապես առանձնացվել են ձկների կլիմայավարժեցման, որսի քանակի և ժամկետների հստակեցման գործընթացներին հետևելը: Վերոհիշյալ միջոցառումներից Հայաստանում կարելի է իրականացնել ցանկացածը՝ Սևանա լճում բնակվող իշխան և սիգ ձկնատեսակների պահպանության համար: Կարևորագույն խնդիր է դրված արհեստականորեն ավելացնել ձկան պաշարները՝ արգելելով ձկնորսությունը:

Հայաստանը բնորոշվում է իր ֆաունայի տեսակային բազմազանությամբ և էնդեմիզմով: Վերջին 2-3 տասնամյակում մարդու գործունեության հետևանքով մեր

բնաշխարհից իսպառ վերացել կամ անհետացման եզրին են գտնվում մոտ 40 տեսակի ձկներ, կաթնասուններ, թռչուններ և սողուններ:

Քանի որ բնապահպանական խնդիրները համամարդկային են, իսկ մենք որպես մանկավարժ կարող ենք և պարտավոր ենք աջակցել այդ հիմնախնդիրների լուծմանը, որոշվեց կազմակերպել համադպրոցական միջոցառում, որի նպատակն էր սովորողների ծանոթացնել առկա բնապահպանական խնդիրների հետ, իսկ նրանք իրենց հերթին փորձեցին վեր հանել այդ խնդիրները լուծելու ճանապարհներ: Աշխատանքը կազմակերպվեց խմբային մեթոդով: Կազմավորվեց 6 խումբ, որոնց մեջ ներառված էին տարբեր դասարանների աշակերտներ (յուրաքանչյուր խմբում 5 աշակերտ): Յուրաքանչյուր խումբ ստացավ իր կոնկրետ հանձնարարականը, բացատրվեց աշխատանքի էությունը, նրանց աշխատանքի կարևորությունը ու պատասխանատվությունը: Սովորողները մեծ ոգևորությամբ սկսեցին աշխատել:

Խմբերին տրված հանձնարարությունները.

№	Խմբի անվանումը	Հանձնարարված աշխատանքը
1.	Հետազոտողներ	Հետազոտել և ներկայացնել առկա բնապահպանական հիմնախնդիրները
2.	Էկո նկարիչներ	Պատրաստել պաստառ վերոհիշյալ թեմայի վերաբերյալ
3.	ՏՀՏ գիտակներ	ՏՀՏ գործիքների, միջոցով ներկայացնել էկոլոգիական հիմնախնդիրները
4.	Բնապահպաններ	Գտնել լուծումներ նշված խնդիրների համար
5.	Բնասերներ	Ներկայացնել մեր քաղաքում առկա բնապահպանական խնդիրները և փորձել գտնել լուծումներ դրանց համար
6.	Վերլուծաբաններ	Ամփոփել բոլոր խմբերի աշխատանքները և գալ եզրահանգումների

Յուրաքանչյուր խումբ մեծ սիրով ու պատասխանատվությամբ կատարեց իրեն հանձնարարված աշխատանքը: Պետք է նշել նաև, որ յուրաքանչյուր խումբ համագործակցել է նաև այլ խմբեր հետ, որի շնորհիվ սովորողները ձեռք բերեցին ոչ միայն համագործակային բազմազան հմտություններ, լսել միմյանց, քննարկել ու

զալ ճիշտ եզրահանգումների այլն ձեռք բերեցին ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, որի շնորհիվ ստեղծվում է ճշմարիտ հետադարձ կապ:

Այս աշխատանքում աշակերտներից յուրաքանչյուրը փոքրիկ հետազոտողներ էին, նրանք ուսումնասիրելով բնապահպանական խնդիրները, փորձելով պատկերել դրանք, առաջարկելով այդ խնդիրների լուծումները՝ ավելի լավ սկսեցին ճանաչել բնությունը, ձուլվեցին նրա հետ և արդեն սկսեցին գիտակցել, որ իրենք բնության մի մասնիկն են և այսուհետ պատասխանատուն են նրա համար:

Սովորողները հաշվի առնելով, որ բույսերն ունեն միջավայրագոյացնող ազդեցություն, կրելով միջոցառման ազդեցությունը իրենց նախաձեռնությամբ դպրոցի շուրջը՝ բավականին մեծ տարածքով տնկեցին դեկորատիվ և պտղատու ծառատեսակներ, դպրոցի բակում տնկեցին տարատեսակ վարդեր և ստեղծեցին գեղեցիկ ծաղկային բակ, բարեկարգեցին դպրոցի բակը, կատարեցին դպրոցի շրջակայիք մաքրման և աղբահանության աշխատանքներ, որն անմիջական ազդեցություն ունի սովորողների բնապահպանական դաստիարակության և բնապահպանական մտածողության ձևավորման վրա:

Աշակերտը խնամելով ու հոգ տանելով իր իսկ ստեղծած կանաչ տարածքի մասին կսկսի այլ հայացքով նայել, գնահատել բնության դերն ու նշանակությունը, իսկ դպրոցից իր հետ կտանի սեր ու հոգատարություն շրջակա միջավայրի նկատմամբ: Եվ ապագայում լինելով հասարակության լիակատար անդամ կնպաստի բնապահպանական մտածողության տարածմանն ու զարգացմանը:

§ 24. Մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը: Օդային զանգվածներ

Առարկան - Աշխարհագրություն			
Դասարանը – 7-րդ	Ուստարի – 2023-2024	Կիսամյակը – 1-ին	
Թեման	Մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը: Օդային զանգվածներ		
Դասի նպատակը	Զարգացնել գիտելիքներ մթնոլորտի ընդհանուր շրջանառության , օդային զանգվածների հիմնական հատկանիշների տիպերի , աշխարհագրական տարածման ու գլխավոր հատկանիշների վերաբերյալ:		
Վերջնարդյունքները	<p>Արդյունքում սովորողը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Թվարկել մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը պայմանավորող գործոնները: • Բնորոշել օդային զանգվածի հիմնական հատկանիշները: • Ներկայացնել օդային զանգվածների հիմնական տիպերի աշխարհագրական տարածումն ու գլխավոր հատկանիշները 		
Ընդհանրական խաչվող հասկացությունները	<p><i>Օրինաչափություններ</i></p> <p>Օդի հորիզոնական և ուղղաձիգ շարժումներ</p> <p>Երկրի գնդաձևության և օրական պտույտի հետևանքով Երկրի մակերևույթի տարբեր տարածքների անհավասարաչափ տաքանալը</p>		
Միջառարկայական կապերը	<p>Հայոց լեզու - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Ձևակերպել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:</p> <p>Բնություն - Կարողանալ բացատրել նթնոլորտային բարձր և ցածր ճնշման մարզեր հասկացությունները:</p>		
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Ուսումնառության նոր նյութ, պրոյեկտոր, գրատախտակ, գլոբուսներ , քարտեզներ		
Ուսուցման մեթոդներ	Մտազրոհ, տեսանյութի դիտում, աշխատանք տեքստով		
ԴԱՄԻ ԸՆԹԱՅՔԸ			
Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի գործողությունները	Աշակերտի գործողությունները
1. Կազմակերպչական մաս (1-2 րոպե)	Կազմակերպել դասի սկիզբը:	Ողջունում է աշակերտներին, նշում բացականերին:	Ողջունում են ուսուցչին, պատասխանում են ուսուցչի հարցերին:
2. Տնային աշխատանքի ստուգում (3-4 րոպե)	Պարզել սովորողների կողմից անցած նյութի յուրացման աստիճանը, առկա խնդիրները:	Հարցերի միջոցով պարզում է նախորդ դասի մասին ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, տալիս է համապատասխան բացատրություններ, ցուցումներ, պատասխանում է հարցերին: Ստուգվում հանձնարարված խնդրի լուծումը , տալիս պարզաբանումներ:	Ներկայացնում են կատարած աշխատանքը, ցուցադրում գիտելիքները, տալիս են հարցեր:

<p>3. Նախորդ դասին ուսումնասիրած նյութի ամփոփում (5-6 րոպե)</p>	<p>Ամփոփել նախորդ աշխատանքի արդյունքները, նախապատրաստել աշակերտներին նոր նյութի ընկալմանը, արդիականացնել գիտելիքներն ու կարողությունները:</p>	<p>Իրականացնում է ձևավորող ինքնագնահատում՝ վիճակահանությամբ առանձնացված հարցերի օգնությամբ: Ամփոփում է աշխատանքը, տալիս համապատասխան պարզաբանումներ: Կապեր ստեղծել նախորդ և օրվա դասերի հիմնական գաղափարների միջև:</p>	<p>Պատասխանում են վիճակահանությամբ առանձնացված հարցերին: Իրականացնում են ինքնագնահատում, լսում ուսուցչի պարզաբանումները: Դատողություններ են անում ուսուցչի հարցադրումների հիման վրա՝ բացահատելով նոր դասի գաղափարները:</p>
<p>4. Հետաքրքրության խթանում (2 րոպե)</p>	<p>Կազմակերպել մտազրոհ, իրականացնել մտքերի քարտեզագրում:</p>	<p>Գրատախտակին գրում է հետևյալ հասկացությունները՝ Օդային զանգված Մթնոլորտային ճակատ Մթնոլորտային բարձր և ցածր ճնշման մարզ</p>	<p>Մովորողները հնչեցնում են թեմատիկ մտքեր, հետաքրքրող հարցեր, դուրս բերում նոր դասի թեման:</p>
<p>5. Դասի թեմայի և նպատակի ձևակերպում (2-3 րոպե)</p>	<p>Քննարկման արդյունքներից բխեցնել դասի նպատակն ու խնդիրները:</p>	<p>Դասի թեման գրում է գրատախտակին, նշում դասի նպատակը և խնդիրները:</p>	<p>Ուշադիր լսում են ուսուցչին, տեսրում գրում են դասի թեման և նպատակը:</p>
<p>6. Ուսումնական նյութի նախնական յուրացում (14-16 րոպե)</p>	<p>Կատարել աշխատանք տեքստով,</p>	<p>Դասը սկսում է ուսուցիչը սահիկաշարով պատրաստված նյութով, այնուհետև աշակերտները կարդում են առանձին մասեր և մեկնաբանում իրենց հասկացածը:</p>	<p>Աշակերտները կարդում են դասի առանձին մասերը, քննարկում այն և գաղափարները գրում գրատախտակին:</p>
<p>7. Գիտելիքների ամրապնդում (8-10 րոպե)</p>	<p>Ամրապնդել ձեռք բերած գիտելիքները թեստի միջոցով:</p>	<p>Գիտելիքների ամրապնդման փուլում ուսուցչի կողմից նախապես տպված թեստերը բաժանվում են սովորողներին: Տրվում է 5 րոպե ժամանակ, այնուհետև փոխանակվում թեստերով և սկսում ստուգումը, կատարում փոխադարձ գնահատում:</p>	<p>Ուսումնասիրված նյութն ամրապնդելու համար սովորողները գրում են թեստը:</p>
<p>8. Անդրադարձ (2-3 րոպե)</p>	<p>Ամփոփել դասը՝ վերլուծելով և գնահատելով կատարված աշխատանքը:</p>	<p>Մովորողներին տրվում են հետևյալ հարցերը. - Ո՞րն է դասի թեման, դասի նպատակը: - Ի՞նչ սովորեցիք այսօրվա դասից: Ուսուցիչը վերլուծում է գրավոր աշխատանքի արդյունքները, պարզում, որ հարցին էին դժվարացել պատասխանել, որպեսզի հաջորդ դասը սկսեն այդ կետից:</p>	<p>Պատասխանում են տրվող հարցերին, ներկայացնում առաջարկություններ:</p>
<p>9. Տնային հանձնարարություն (2 րոպե)</p>	<p>Հանձնարարել տնային առաջադրանքը:</p>	<p>Հանձնարարում է տանն ընթերցել ուսումնառության նոր նյութը, պատասխանել պարագրաֆի վերջում բերված հարցերին:</p>	<p>Գրանցում են հանձնարարությունները:</p>

ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

§ 21. Կլիմա: Կլիմաստեղծ գործոնները

Առարկան - աշխարհագրություն		
Դասարանը – 7-րդ	Ուստարի – 2023-2024	Կիսամյակը – 1-ին
Թեման	Կլիմա: Կլիմաստեղծ գործոնները	
Դասի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ կլիմա հասկացությունը վերաբերյալ , <i>F</i> • բնակավայրի կլիմաստեղծ գործոնները և կլիմայի սեզոնային փոփոխությունների վերլուծություն: • աշխարհագրական տարբեր լայնություններում օդի ջերմաստիճանների տարբերության գլխավոր պատճառների մեկնաբանություն : • տարվա ընթացքում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոփոխություն բացատրություն: 	
Վերջնարդյունքները	<p>Արդյունքում սովորողը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Բնորոշի կլիմա հասկացությունը, <i>բացատրել</i> կլիմաստեղծ գործոնները: • <i>Բացատրել</i> իր բնակավայրի կլիմաստեղծ գործոնները և կլիմայի սեզոնային փոփոխությունները: • <i>Բացատրել</i> աշխարհագրական տարբեր լայնություններում օդի ջերմաստիճանների տարբերության գլխավոր պատճառը: • <i>Բացատրել</i> տարվա ընթացքում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոփոխությունը: <p>Օրինակներով <i>բացատրել</i> կլիմայի ազդեցությունը մարդու առօրյա գործունեության վրա:</p>	
Ընդհանրական խաչվող հասկացությունները	<p><i>Պատճառ և հետևանք</i> Արեգակի ճառագայթների փոփոխություն Աշխարհագրական լայնություն , տեղանքի բարձրություն</p>	
Միջառարկայական կապերը	<p>Հայոց լեզու - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:</p> <p>Բնություն – Բուսական և ձյան ծածկույթի ազդեցության վերլուծություն Մաթեմատիկա –Կարողանա հաշվել տարբեր բարձրություններում օդի ջերմաստիճանը</p>	
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք, համակարգիչ , կլիմայական քարտեզներ,	

Ուսուցման մեթոդներ:	Զրույց, մտազրոհ, ցուցադրում, դիտում,
---------------------	--------------------------------------

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի Գործողությունները	Աշակերտի գործողությունները
1. Կազմակերպչական մաս (2 րոպե)	Նախապատրաստվել դասին	Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույն, բացականչության ամրագրում:	Պատասխանում են ուսուցչի հարցերին:
2. Դասի թեմայի և նպատակի ձևակերպում (5 րոպե)	Քննարկման արդյունքներից բխեցնել դասի նպատակը:	Այսօրվա դասի թեման է « Կլիմա: Կլիմաստեղծ գործոնները »: Դասի նպատակն է սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ <ul style="list-style-type: none"> • կլիմա հասկացություն վերաբերյալ , • բնակավայրի կլիմաստեղծ գործոնները և կլիմայի սեզոնային փոփոխությունների վերլուծություն: • աշխարհագրական տարբեր լայնություններում օդի ջերմաստիճանների տարբերության գլխավոր պատճառների մեկնաբանություն : • տարվա ընթացքում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոփոխության բացատրություն 	Աշակերտները տեսրում գրում են դասի թեման և նպատակը:
3. Հետաքրքրության խթանում (6 րոպե)	Շարժել սովորողների հետաքրքրությունը ուսումնասիրվող թեմայի նկատմամբ:	Հարցնում է սովորողներին՝ <ol style="list-style-type: none"> 1. Ի՞նչ գիտենք կլիմայի մասին: 2. Ձեր կարծիքով ինչի՞ արդյունքում է երկրի մակերևույթը տաքանում անհավասարաչափ 3. Ի՞նչ ազդեցություն ունի կլիման մարդու առօրյա գործունեության վրա 4. Ի՞նչ է սեզոնայնությունը: <p>Լսում է պատասխանները: Ուսուցիչը նշում է, որ աշակերտներն այդ հարցերի հստակ պատասխանները կստանան դասի ավարտին</p>	Սովորողները պատասխանում են տրված հարցերին, առաջադրում հնարավոր վարկածներ:

<p>4. Ուսումնական նյութի նախնական յուրացում (14-15 րոպե)</p>	<p>Բացատրել կլիմա հասկացությունը , կլիմայաստեղծ գործոնների ազդեցությունը աշխարհագրական առանձնահատկությունները:</p>	<p>Ուսուցիչը դասը բացատրում է սահիկաշարի միջոցով , որտեղ հստակ շեշտադրված են դասի վերջնարդյունքները: Ուսումնասիրում են Արեգակից եկող ճառագայթների անկման անկյունը տարբեր աշխարհագրական լայնություններում:</p>	
<p>5. Գիտելիքների ամրապնդում (6 րոպե)</p>	<p>Ձևավորել ձեռք բերած գիտելիքները ներկայացնելու, մեկնաբանելու կիրառելու կարողություններ:</p>	<p>Ուսուցչի օգնությամբ աշակերտները կազմում են 4 հարցերից կազմված թեստեր, փոխանակում միմյանց հետ , կատարում առաջադրանքը : Կատարվում է փոխադարձ գնահատում:</p>	<p>Սովորողները կատարում են տրված առաջադրանքները:</p>
<p>6. Անդրադարձ (6 րոպե)</p>	<p>Ամփոփել դասը՝ վերլուծելով և գնահատելով կատարված աշխատանքը:</p>	<p>Սովորողներին տրվում են հետևյալ հարցերը. - Ո՞րն էր այսօրվա դասի թեման: - Ի՞նչ հետաքրքիր բան իմացաք այսօր, նշեք դասի դրական և բացասական կողմերը: Ուսուցիչն ամփոփում է՝ վերլուծելով թեստի արդյունքները՝ . Ո՞ր հարցերն էին կազմված առավել տրամաբանորեն . Ո՞ր հարցին էին տվել առավել սխալ և առավել ճիշտ պատասխաններ</p>	<p>Պատասխանում են տրվող հարցերին, ներկայացնում առաջարկություններ:</p>
<p>7. Տնային հանձնարարություն (5 րոպե)</p>	<p>Ներկայացնել տնային առաջադրանքը:</p>	<p>Հանձնարարում է տանը տեսրերում պատասխանել հետևյալ հարցերին՝ . Ինչպիսի՞ ազդեցություն է ունենում կլիման մարդու առօրյա գործունեության վրա . Բացատրել ի՞նչ է նշանակում կլիմայի սեզոնային փոփոխություն ասելով:</p>	<p>Գրի են առնում հիմնական հասկացությունները:</p>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ բնապահպանական դաստիարակությունը անմիջականորեն կախված է բնապահպանական գիտակցության, բնապահպանական մշակույթի և գիտելիքների մակարդակից: Բնապահպանական դաստիարակության չափանիշ է համարվում մարդու սթափ և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի

նկատմամբ և այդ վերաբերմունքի համապատասխանեցումը հասարակական նորմերին: Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն: Մենք, այժմ ապրում են էկոլոգիական այնպիսի ժամանակաշրջանում, ուր ամեն պահի կարելի է սպասել էկոլոգիական աղետի: Դա գլոբալ խնդիր է և չի ճանաչում սահմաններ: Հայաստանում առկա բնապահպանական խնդիրները հասնում են մեծ չափերի: Որպես օրինակ բերենք այն փաստը, որ ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդու հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Այդ տարածքները ոմանք օգտագործում են սեփական նպատակների համար, հաշվի չառնելով դրա հետագա վտանգավորությունը: Ոչնչացնում են զբոսայգիները, այն դարձնելով սրճարաններ կամ զվարճանքի վայրեր: Կանաչ տարածքների բացակայության հետևանքով է, որ հիվանդությունների քանակը չափից դուրս շատացել է, ինչպես նաև ոչնչանում են այդ տարածքներում ապրող կենդանիների տեսակները: էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան և բարոյական որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը, արժեքային դիրքորոշումներն:

Սովորողների մոտ այս բոլոր արժեքների ձևավորումը կնպաստի, որպեսզի հետագայում բնապահպանական նման մեծ խնդիրների չբախվենք, քանզի մենք դաստիարակել ենք ապագա բնապահպանների, որոնց համար բնության պաշտպանությունը այսուհետ առաջնային դերում է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Երևան, 2005թ. Մանկավարժ հրատ. 456 էջ:
2. Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս., էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում, Երևան, 2003թ., 235էջ :

3. Ասատրյան Լ.Թ., Սաֆարյան Ն.Ա., Դպրոցի դաստիարակության հիմունքները, Երևան, Արտագերս, 2018թ., 244 էջ:
4. Արնատուղյան Ա., Գյուլբուղդայան Ա. և այլոք, Մասնագիտական զարգացման ձեռնարկ, ԿԱԻ, Երևան, 2004թ., 178 էջ:
5. Եղոյան Ռ. Հ., Հովակիմյան Ժ. Հ., Բնապահպանության դասավանդման մեթոդիկայի և լաբորատոր-գործնական պարապմունքների ձեռնարկ, Երևան, 2015թ., էջ 12-28, 71-79:
6. Հայրապետյան Է.Մ., Հարությունյան Լ.Վ., Բնության պահպանության հիմունքներ, Երևան, 1983, Լույս հրատարակչություն, 427 էջ:
7. ՀՀ կենսաբազմազանության V ազգային զեկույց, 2014թ., 137 էջ:
8. Մարուխյան Ռ.Զ., Հովսեփյան Ա.Ա., Անձի էկոլոգիական կուլտուրա, Երևան Արևիկ, 2005թ., 367 էջ

Էլեկտրոնային հղումներ

9. <https://www.facebook.com/pages/%D4%BF%D5%A1%D6%84%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B1%D5%B8%D6%80%D5%AB-%D5%84%D5%B4%D5%AD%D5%AB%D5%A9%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D4%B1%D5%B6%D5%BE%D5%A1%D5%B6-%D5%84%D5%AB%D5%BB%D5%B6-%D4%B4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81/1763966220586369>
10. <http://gspi.am/media/journal/2016n1b/17.pdf>
11. <https://www.hamakarg.am/?p=1490>
12. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%A2%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_%D6%87_%D5%A2%D5%B6%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B4
13. <https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-28/3614185cc01a91f633cae5cffe1e81a6.docx>